ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

Գերմանական համագործակցություն DEUTSCHE ZUSAMMENARBEIT

Implemented by giz Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH

Schweizerische Eidgenossenschaft
Confédération suisse
Confederazione Svizzera
Confederaziun svizra

Swiss Agency for Development and Cooperation SDC

ՀՀ պետական կառավարման ակադեմիա

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԱՎԱԳԱՆԻՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ՄՈԴՈՒԼ 2.

Համայնքի ավագանուն՝ «Տեղական տուրքերի և վճարների մասին» և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքներով վերապահված լիազորությունները

ՄՈԴՈՒԼԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Տեսական և գործնական ուսուցման միջոցով զարգացնել ունկնդիրների գիտելիքները

- «Տեղական տուրքերի և վճարների մասին» և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքներով համայնքի ավագանուն վերապահված իրավասությունների վերաբերյալ,
- բարձրացնել համայնքի ֆինանսական կառավարման ոլորտում ավագանու անդամի իրավունքների և պարտականությունների իմացության մակարդակը,
- ընդլայնել համայնքի բյուջեի ընդունման և տեղական տուրքերի ու վճարների սահմանման գործընթացներում ավագանու լիազորությունների մասին իրազեկվածության շրջանակը,
- նպաստել համայնքի զարգացման ծրագրերի վերաբերյալ որոշումների կայացման մրցակցային հնարավորությունների մեծացմանը,
- աջակցել համայնքի բյուջեի, ՀՀՌԾ-ի, ՄԺԾԾ-ի, ՏԱՊ-ի մշակման և ընդունման ժամանակ ակտիվ ներգրավվածություն ունենալու կարողությունների կատարելագործմանը:

ՄՈԴՈՒԼԻ ԹԵՄԱՆԵՐԸ

ԹԵՄԱ 1.

Համայնքի ավագանու լիազորությունները համայնքի հնգամյա զարգացման ծրագրի, համայնքի տարեկան բյուջեի, տարեկան աշխատանքային պլանի և միջնաժամկետ ծախսերի ծրագրի կազմման ու հաստատման գործընթացում

ԹԵՄԱ 2.

Համայնքի ավագանու դերը տեղական տուրքերի և վճարների տեսակների և դրանց դրույքաչափերի սահմանման, ինչպես նաև տեղական տուրքի կամ վճարի մասով արտոնություն տրամադրելու գործընթացներում

ՄՈԴՈՒԼԻ ԹԵՄԱՆԵՐԸ

ԹԵՄԱ 3.

Տեղական տուրք **և** ***վճար*** **հասկացությունները, տեղական տուրք և վճար վճարողները, նրանց իրավունքներն ու պարտականությունները**

ԹԵՄԱ 4.

Համայնքի բյուջե հասկացությունը, դրա նպատակները, բյուջեի ձևավորման սկզբունքներն ու կառուցվածքը, համայնքի բյուջեի մուտքերը և ելքերը, բյուջեի նախագծի կազմումը, քննարկումը և հաստատումը

ԹԵՄԱ 5.

Համայնքի բյուջեի կատարումը, կատարման հսկողությունն ու վերահսկողությունը, բյուջեի կատարման հաշվետվությունների կազմումը, քննարկումը և հաստատումը, համայնքի բյուջեի հրապարակայնու-թյունը

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համայնքի հնգամյա զարգացման ծրագիր	Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ է, որը նախատեսում է ռազմավարական կտրվածքով համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծումը
Համայնքի բյուջե	Համայնքի եկամուտների ձևավորման և ծախսման մեկ տարվա ֆինանսական ծրագիր
Տարեկան աշխատանքային պլան	Համայնքի տարեկան աշխատանքային պլանը համայնքի ծրագրային փաստաթուղթ է, որը սահմանում է տվյալ տարվա ընթացքում ՏԻՄ-երի կողմից կամ նրանց մասնակցությամբ համայնքում իրականացվող բոլոր ծրագրերը և միջոցառումները:
Միջնաժանկետ ծախսերի ծրագիր	Համայնքի ծախսային ռազմավարությունը երեք տարվա համար

Թեմա 1. Համայնքի ավագանու լիազորությունները համայնքի ինգամյա զարգացման ծրագրի, համայնքի տարեկան բյուջեի, տարեկան աշխատանքային պլանի և միջնաժամկետ ծախսերի ծրագրի կազմման ու հաստատման գործընթացում

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔ
«ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔ
«ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱՀԱՐԹԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ	
ՀՈԴՎԱԾ 184	Համայնքն ունի հողի, ինչպես նաև այլ գույքի նկատմամբ **սեփականության իրավունք:** Համայնքի ավագանին օրենքով սահմանված կարգով **տնօրինում է** համայնքի սեփականությունը:
ՀՈԴՎԱԾ 185	Համայնքն ունի իր **բյուջեն,** որը համայնքի ղեկավարի ներկայացմամբ ընդունում է համայնքի **ավագանին:** Համայնքի **ավագանին** օրենքով սահմանված դրույքաչափերի շրջանակներում սահմանում է **տեղական հարկեր և տուրքեր:** Համայնքի **ավագանին** կարող է համայնքի մատուցած ծառայությունների համար սահմանել համայնքի բյուջե մուտքագրվող **վճարներ:**

Հետաքրքիր է իմանալ, որ ...

1985 թ. հոկտեմբերի 15-ին
Ստրասբուրգում ԵԽ-ի կողմից ընդունված

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽԱՐՏԻԱՆ

սահմանում է, որ
տեղական ինքնակառավարման մարմինների

ֆինանսական միջոցները

պետք է համաչափ լինեն Սահմանադրությամբ կամ օրենքով
նրանց տրված լիազորություններին:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ
ՀԱՍՏԱՏՈՒՄ Է ՀԱՄԱՅՆՔԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ
ՀԱՍՏԱՏՈՒՄ Է ՀԱՄԱՅՆՔԻ
ԲՅՈՒՋԵՆ,
բյուջեի՝ համայնքի ղեկավարի առաջարկած փոփոխությունները
և բյուջեի կատարման
տարեկան հաշվետվությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ
ՀԱՍՏԱՏՈՒՄ Է ՀԱՄԱՅՆՔԻ
ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ,
միջնաժամկետ ծախսերի ծրագրի՝ համայնքի ղեկավարի առաջարկած փոփոխությունները:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ
ՀԱՍՏԱՏՈՒՄ Է ՀԱՄԱՅՆՔԻ
ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ
և
դրա իրականացման վերաբերյալ հաշվետվությունները:

ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

հաջողությունը պայմանավորված է

ճիշտ, գրագետ,

համակարգված և հավասարակշռված

պլանավորմամբ,

այսինքն՝

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐՈՎ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ

համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի վերլուծության և

առկա հիմնախնդիրների բացահայտման,

ֆինանսական,

տնտեսական,

բնական և մարդկային

ռեսուրսների գնահատման արդյունքում

նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք

քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ է,

որը նախատեսում է ռազմավարական կտրվածքով

ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԼՈՒԾՈՒՄԸ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԸ

մշակում է

համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը և իր լիազորություններն ստանձնելու օրվանից հետո

ՉՈՐՍ ԱՄՍՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

ներկայացնում է

ավագանու հաստատմանը:

Հետաքրքիր է իմանալ, որ ...

**Նոր ձևավորված համայնքի դեպքում
համայնքի ղեկավարը մշակում է
համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը
և ներկայացնում ավագանու հաստատմանը իր լիազորություններն
ստանձնելու օրվանից հետո**

ՀԻՆԳ ԱՄՍՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Կարևոր է հիշել, որ ...

Համայնքի հնգամյա զարգացման ծրագրում փոփոխություններ կամ լրացումներ կարող են առաջարկվել

համայնքի ղեկավարի կամ

համայնքի ավագանու անդամների՝

օրենքով սահմանված թվի առնվազն մեկ երրորդի կամ մշտական հանձնաժողովների կողմից՝

հաշվետու տարում համայնքի տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը համայնքի ղեկավարի ներկայացնելուց հետո

մեկ ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ

քննարկում է ներկայացված համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը, անհրաժեշտության դեպքում կատարում փոփոխություններ կամ լրացումներ և ընդունում է այն

նիստին ներկա ավագանու անդամների ձայների կեսից ավելիով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՊԵՏՔ Է	
ՀԱՄԱՀՈՒՆՉ ԼԻՆԻ	ՆԵՐԱՌԻ
Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի և կառավարության հավանությանն արժանացած մարզային, տարածաշրջանային զարգացման և այլ ռազմավարական ծրագրերին:	համայնքի հնարավորությունների շրջանակում իրագործելի պարտադիր խնդիրները և դրանց լուծման նպատակով նախատեսվող ծրագրերը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ ՊԵՏՔ Է ՍԱՀՄԱՆՎԵՆ՝	
համայնքի զարգացման **ՏԵՍԼԱԿԱՆԸ՝** հեռահար նպատակները հինգ տարվա համար, համայնքի զարգացման հիմնական ուղղությունները և զարգացման խթանները:	համայնքի զարգացման **ԱՆՄԻՋԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ՝** համայնքի հնարավորությունների շրջանակում իրագործելի պարտադիր խնդիրներից յուրաքանչյուրի համար:
ՀՀՀԶԾ իրականացումը պետք է ապահովի համայնքի **ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ:**	

ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ

համայնքի ծրագրային այն փաստաթուղթն է, որը սահմանում է տվյալ տարվա ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կամ նրանց մասնակցությամբ համայնքում իրականացվող

բոլոր ծրագրերը և միջոցառումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ

մշակվում և հաստատվում է համայնքի ավագանու կողմից հաստատված հնգամյա զարգացման ծրագրի հիման վրա՝ տվյալ տարվա ընթացքում համայնքի տնտեսական, սոցիալական, մշակութային, բնապահպանական և այլ ծրագրերի ու միջոցառումների պլանավորման, իրականացման և վերահսկման գործընթացներն առավել նպատակային և արդյունքահենք կազմակերպելու համար:

Կարևոր է իմանալ, որ ...

ՏԱՊ-ը համայնքում առկա ֆինանսական, վարչական, մարդկային և սոցիալական ռեսուրսները կամ կապիտալները կառավարելու գործիք է:

ՏԱՊ-ՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՒՄ ԵՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ՝
ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ
ԱՅԼ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ՉՊԱՀԱՆՋՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ
ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ, ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ
ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ
ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՎ ԱՅԼ ԾՐԱԳՐԵՐԸ

Կարևոր է հիշել, որ ...

Համայնքի ղեկավարը բյուջեի կատարման տարեկան հաշվետվության հետ **համայնքի ավագանուն է ներկայացնում** հաշվետու տարում համայնքի ՏԱՊ-ի իրականացման վերաբերյալ

հաշվետվությունը:

ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

սահմանում է եռամյա ժամանակահատվածում համայնքի ծախսային քաղաքականությունը տարեկան կտրվածքով՝

հնարավորություն ընձեռելով համայնքի համար միջնաժամկետ հատվածում կառավարելու համայնքի ֆինանսական ռեսուրսները և ստեղծելու պատշաճ ծրագրային հիմքեր առաջիկա տարվա համայնքի բյուջեի նախագծի մշակման համար:

Կարևոր է հիշել, որ ...

Համայնքների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը բաղկացած է երկու մասից՝

1. համայնքի եկամուտները,
2. համայնքի ծախսային քաղաքականությունը

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԸ **ԱԿՏԻՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ** ԵՆ ՈՒՆԵՆՈՒՄ ՀՀՀԶԾ, ՄԺԾԾ, ՏԱՊ ԵՎ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ՝
ՄՇԱԿՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ
ԿԱԶՄՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐԻՆ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻՆ
ՓՈՓՈԽՄԱՆ ԵՎ ԼՐԱՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ
ԱՎԱԳԱՆՈՒ ԻՐԱՎԱՍՈՒ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՒՄ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻՆ
ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏՈՒՄ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ

ՀՐԱՊԱՐԱԿՎՈՒՄ ԵՆ

համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը

համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագիրը

համայնքի տարեկան աշխատանքային պլանը

համայնքի տարեկան բյուջեն

Տարածվում են համայնքի կազմում ընդգրկված բոլոր բնակավայրերում և տեղադրվում են համայնքի պաշտոնական համացանցային կայքում:
Համայնքի բնակչության համար առավել մատչելի դարձնելու նպատակով պատրաստվում և հրատարակվում են հիմնական ցուցանիշներ, վիճակագրական և գրաֆիկական տվյալներ պարունակող տեղեկատուներ ու գրքույկներ:

Թեմա 2. Համայնքի ավագանու դերը տեղական տուրքերի և վճարների տեսակների և դրանց դրույքաչափերի սահմանման, ինչպես նաև տեղական տուրքի կամ վճարի մասով արտոնություն տրամադրելու գործընթացներում

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ

ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԴԵՊՔԵՐՈՒՄ ՍԱՀՄԱՆՈՒՄ Է ՏԵՂԱԿԱՆ

ՀԱՐԿԵՐԻ,
ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ
ՎՃԱՐՆԵՐԻ

ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ

ՍԱՀՄԱՆՈՒՄ Է ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ

ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ:

Կարևոր է հիշել, որ ...

Տեղական տուրքը գանձվում է <u>նախքան</u> օրենքով սահմանված գործողությունների կատարումը կամ թույլտվությունների տրամադրումը կամ համայնքային ծառայությունների մատուցումը:

Կարևոր է հիշել, որ ...

<u>Համայնքի ավագանու որոշմամբ,</u>

տեղական տուրքերի և վճարների գծով կարող են կիրառվել

<u>ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ:</u>

****

Արտոնությունները՝ ավագանու սահմանած փաստաթղթերի և տեղեկությունների հետ միասին, համայնքի ղեկավարի ներկայացմամբ սահմանում է համայնքի ավագանին:

<u>Տեղական տուրքերի և վճարների արտոնություններ են՝</u>

- **տեղական տուրքի և վճարի դրույքաչափի նվազեցումը ավագանու սահմանած տոկոսի չափով,**
- **տեղական տուրքի և վճարի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառումը,**
- **հաշվարկված տեղական տուրքի և վճարի վճարումից ազատումը:**

Թեմա 3. Տեղական տուրք և վճար հասկացությունները, տեղական տուրք և վճար վճարողները, նրանց իրավունքները և պարտականությունները

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԸ	ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐԸ
տեղական ինքնակառավարման մարմինների սեփական <u>լիազորությունների իրականացմամբ</u> պայմանավորված՝ օրենքով սահմանված <u>գործողությունների համար</u> համայնքի բյուջե վճարվող՝ ավագանու սահմանած պարտադիր գանձույթ է:	տեղական ինքնակառավարման մարմինների սեփական <u>լիազորությունների շրջանակներում</u> համայնքի կամ համայնքի պատվերով մատուցած <u>ծառայությունների համար</u> համայնքի բյուջե վճարվող՝ ավագանու սահմանած պարտադիր գանձույթ է:

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ ԵՎ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ	ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ ԵՎ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
• *ինքնուրույն հաշվարկել իրենց կողմից վճարվող տեղական տուրքի և վճարի չափը* • ***ծանոթանալ իրենց կողմից վճարվող տեղական տուրքի և վճարի չափին և հաշվարկներին*** • *տեղեկություններ ստանալ իր կատարած վճարումների մասին* • ***դիմել համայնքի ղեկավարին՝ տեղական տուրքի և վճարի վճարման արտոնություններ ստանալու համար*** • *մասնակցել տեղական տուրքի և վճարի սահմանման համար կազմակերպվող հանրային լսումներին* • ***վերադասության, ինչպես նաև դատական կարգով բողոքարկել տեղական տուրք և վճար գանձող պաշտոնատար անձանց գործողությունները***	• **սահմանված ժամկետում և կարգով լրիվ վճարել սահմանված տեղական տուրքերը և վճարները** • **ներկայացնել տեղական տուրքի և վճարի վճարման գծով իրեն վերապահված արտոնությունները հիմնավորող փաստաթղթերը կամ դրանց պատճենները** • **վճարել տեղական տուրքը և վճարը ժամանակին չվճարելու համար հաշվարկված տույժի գումարները**

Թեմա 4. Համայնքի բյուջե հասկացությունը, դրա նպատակները, բյուջեի ձևավորման սկզբունքներն ու կառուցվածքը, համայնքի բյուջեի մուտքերը և ելքերը, բյուջեի նախագծի կազմումը, քննարկումը և հաստատումը

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՆ

համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագրով նախատեսված եկամուտների (մուտքերի)

ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԾԱԽՍՄԱՆ

ՄԵԿ ՏԱՐՎԱ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ

ԾՐԱԳԻՐՆ Է,

որը նպատակաուղղվում է համայնքի հնգամյա զարգացման ծրագրի և տեղական ինքնակառավարման մարմինների՝ օրենքով վերապահված լիազորությունների իրականացմանը:

Կարևոր է հիշել, որ ...

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՆ ԲԱՂԿԱՑԱԾ Է ՎԱՐՉԱԿԱՆ ԵՎ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԵՐԻՑ

Համայնքի բյուջեն ունի ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴ, որը կարող է օգտագործվել տվյալ տարվա բյուջեով չկանխատեսված ծախսերի կամ նախատեսված ծախսերի լրացուցիչ ֆինանսավորման համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

- հարկային եկամուտներ
- տուրքեր
- այլ եկամուտներ
- ոչ ֆինանսական ակտիվների օտարումից ստացվող միջոցներ
- պաշտոնական դրամաշնորհների ձևով ստացվող հատկացումներ
- համայնքի բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրներ

Համայնքի հնգամյա զարգացման ծրագրի կամ տարեկան բյուջեի կառավարման (կազմման, հանրային քննարկման, իրականացման (կատարման) և վերահսկման) գործընթացներում համայնքի բնակիչների մասնակցությունն ապահովելու համար համայնքի ղեկավարի առաջարկությամբ և համայնքի ավագանու որոշմամբ ձևավորվում է

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝

աշխատակազմի և համայնքային կազմակերպությունների համապատասխան մասնագետների ընդգրկմամբ, ինչպես նաև

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՄԵԿԻՑ ՄԻՆՉԵՎ ԵՐԵՔ ԱՆԴԱՄՆԵՐԻ,

բնակիչների, փորձագետների և այլ շահագրգիռ անձանց ներգրավմամբ:

Կարևոր է հիշել, որ ...

Համայնքի ղեկավարը մինչև համայնքի հնգամյա զարգացման ծրագրի, համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագրի կամ տարեկան բյուջեի նախագծերը համայնքի ավագանու հաստատմանը ներկայացնելը կազմակերպում և անցկացնում է ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՑ ԼՍՈՒՄՆԵՐ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ:

Հանրային բաց լսումներում կամ քննարկումներում ստացված և ընդունված առարկությունների և առաջարկությունների վերաբերյալ համայնքի ղեկավարը տեղեկություն է տրամադրում համայնքի ավագանուն:

Անհրաժեշտ է իմանալ, որ ...

Համայնքի ղեկավարը բյուջեի նախագիծը ավագանու քննարկմանն է ներկայացնում ՀՀ կառավարության կողմից ֆինանսական համահարթեցման սկզբունքով համայնքներին տրամադրվող դոտացիաների նախնական թվերի հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում:

Թեմա 5. Համայնքի բյուջեի կատարումը, կատարման հսկողությունն ու վերահսկողությունը, բյուջեի կատարման հաշվետվությունների կազմումը, քննարկումը և հաստատումը, համայնքի բյուջեի հրապարակայնությունը

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ

սպասարկումն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով իրականացվում է պետական ֆինանսների կառավարման բնագավառում ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի՝

ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆԻ ՄԻՋՈՑՈՎ,

որտեղ ամեն համայնք ունի իր առանձին բյուջետային հաշվի համարը:

Անհրաժեշտ է իմանալ, որ ...

Բյուջետային գործընթացի նկատմամբ պետական լիազորված մարմինն իրականացնում է

իրավական հսկողություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆՆ

իրականացնում են համայնքի ավագանին, Ազգային ժողովը և կառավարությունը՝ օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում:

***

Համայնքի ավագանին համայնքի բյուջեի կատարման վերահսկողությունն իրականացնում է իր անդամի (անդամների) և (կամ) աուդիտորական մասնագիտացված կազմակերպության միջոցով, ավագանու որոշած պարբերականությամբ, բայց ոչ պակաս, քան տարին մեկ անգամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
Համայնքի ղեկավարը եռամսյակը մեկ՝ մինչև հաշվետու **եռամսյակին հաջորդող ամսվա տասնհինգը**, բյուջեի կատարման ընթացքի մասին հաղորդում է ներկայացնում ավագանուն:
Համայնքի ղեկավարը բյուջեի կատարման **տարեկան հաշվետվությունն** ավագանուն է ներկայացնում մինչև հաշվետու բյուջետային **տարվան հաջորդող տարվա մարտի 1-ը**՝ նախնական քննարկումներ անցկացնելու համար:
Ավագանու նիստում բյուջեի կատարման տարեկան **հաշվետվությունը քննարկվում և ընդունվում է** բյուջեի նախագծի քննարկման և ընդունման համար սահմանված կարգով՝ մինչև հաշվետու բյուջետային տարվան հաջորդող **տարվա մարտի 20-ը:**

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ՝

- **համայնքի բյուջեի մասին որոշման նախագիծը համայնքի ավագանուն ներկայացնելուց հետո եռօրյա ժամկետում հրատարակվում է տեղական մամուլում.**
- **բյուջետային տարվա յուրաքանչյուր եռամսյակից հետո մեկ ամսվա ընթացքում հրապարակվում է տեղեկատվություն համայնքի բյուջեի եռամսյակային կատարման մասին.**
- **համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համայնքի ավագանու հաստատելուց հետո հնգօրյա ժամկետում հրապարակվում է տեղական մամուլում և www.Azdarar.am հասցեում գտնվող ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում.**
- **համայնքների ղեկավարները պայմաններ են ստեղծում, որ համայնքի բյուջեի նախագծին, տարեկան հաշվետվությանը ծանոթանալու և ուսումնասիրելու ցանկություն ունեցող համայնքի անդամները դյուրությամբ ձեռք բերեն համապատասխան փաստաթղթերը:**

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Վարժություն 1.

ԴԵՊՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1.

ԴԵՊՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2.

Վարժություն 2.

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ ԵՎ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՍԽԵՄԱ

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ